

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ. Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, 327 էջ + 2 մամուլ ներդիր:

Պատմագիտության կարևորագույն ճյուղերից մեկը տոհմաբանությունն է, և այս դեպքում խոսքը վերաբերում է Արցախի մելիքություններին ու մելիքական տներին, որոնց երկդարյա պատմաաշխարհային ներկայացված է ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Արտակ Մաղալյանի սույն մենագրության էջերում: Պետք է նշել, որ նախախորհրդային և խորհրդային շրջանի հայ հեղինակների կողմից գրվել են աշխատություններ՝ նվիրված Արցախի ու շրջանային պատմությանը, այսուհանդերձ սույն հիմնահարցը դեռևս բավարար չափով լուսաբանված չէր հայ պատմագիտության կողմից:

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, երկու ընդարձակ գլուխներից, վերջաբանից և հավելվածից:

Առաջին գլխում («Արցախի մելիքությունները որպես հայոց պետականության դրսևորում») ներկայացված է մելիքական իշխանությունների ծագման ակունքներն ու պատմական նախադրյալները, «մելիք» տերմինի ծագումնաբանությունը, ապա մելիքների աննահանջ պայքարը օտար նվաճողների դեմ: Հեղինակը ճշմարիտ դիտարկում է, որ Մյունխենում և Արցախում մելիքները թեև ընդունել էին նվաճողների գերիշխանությունը, սակայն ներքին կառավարման ոլորտում (հարկահավաք, դատավարություն և այլն) ունեին ինքնուրույն գործելու լիակատար հնարավորություն, ինչպես նաև զորք պահելու իրավունք: Հետաքրքիր և ուշագրավ մի համեմատության մասին, որն անմիջապես գրավում է ընթերցողի ուշադրությունը: Դա XVIII դարի 30-ական թվականներին Անդրկովկասում Քարթլի-Գախեթի վրացական վալիության և նրա կողքին ստեղծված «մահալ-ե խամսե» հայկական մելիքության միջև անցկացված գուգահեռն է, որը վկայում է, թե «վրաց թագավորներ» հորջորջ-

վողները պարսկական իշխանությունների կողմից ճանաչված էին սոսկ որպես «կառավարիչներ» կամ «վալիներ» ու «խաներ»: Մինչդեռ դա բնավ չէր խանգարում, որ վրաց նույն այդ կառավարիչները թագավորներ կոչվեին Վրաստանում և որպես այդպիսիներ ճանաչվեին միջնադարյան վրացական հանրության կողմից:

Թեև Արցախի մելիքները չէին անվանվում թագավորներ, սակայն, ինչպես հեղինակն է հստակ փաստարկում, նրանք այն միակ ուժն էին, որոնց հենքի վրա բարենպաստ հանգամանքներում կարող էր վերստին հատնել հայոց պետականությունը: Ի դեպ, վերոնշյալ հանգամանքը կարևորել է նաև միայն երկրաբանակ, այլև աշխարհասփյուռ հայրերին, որոնց համար Արցախի մելիքությունների ճակատագիրը միշտ էլ եղել է առանձնահատուկ մտահոգությունների առարկա: Այս առումով անհրաժեշտ մեջբերում հեռավոր Հնդկաստանից՝ հնդկահայ նշանավոր գործիչ Շահամիր Շահամիրյանի շուրթերով բարբառված՝ ուղղված Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին. «Թեպետ քայքայեցաք յիշխանութենէ, հարստութենէ և նշանաւոր արանցէ, այլ շնորհօքն աստուծոյ ոչ իսպառ քակեցաք և բլաք որպէս իսրայէլ, եգիպտացիք, այսորիք և հունք. դեռևս

գտանի միջի մերում մասնաւոր իշխանութիւն» (էջ 36): Հնդկահայ գործիչը, անշուշտ, նկատի ունի Արցախի մելիքություններին: Այնուհետև Շ. Շահամիրյանը հանդես եկավ Գյուլիստան գավառի տիրակալ Մելիք-Աբովի և Ջրաբերդ գավառի Մելիք-Մեջլումի հաշտեցման առաջարկով, որոնք հալածական էին Շուշիի Բրբահիւմ խանից:

«Արցախի մելիքների զինուժը» ենթագլխում Ա. Մաղալյանը մանրամասնությամբ տալիս է Արցախի մելիքների զինուժի թվաքանակն ու մարտունակության աստիճանը տարբեր ժամանակներում, ընդամին

կարևորելով, որ մելիքների զինուժը հանդիսացել է Արցախում ձևավորված հայկական իշխանությունների հզորության և անվտանգության գրավականը: Տարբեր աղբյուրների վկայակոչումով, նա հավաստում է, որ արցախցի զինագործները նաև զենք ու զինամթերք են պատրաստել մելիքական զորքի համար: Իսկ զորքի թվաքանակը նրանց իշխանության երկարատև ժամանակահատվածում եղել է փոփոխական: Ճշմարտացի է հեղինակի այն դիտարկումը, որ մելիքները առավելագույն թվով զինուժ ունեցել են 1720-ական թվականների ազգային-ազատագրական վերելքի տարիներին: Էական փաստերով տրված է մելիքական ուժերի պայքարի ու մաքառումների ուրվագիծն ընդդեմ օսմանյան ահեղ զինուժի, որը 1724 թ. հունիսի 12-ին Կ. Պոլսում կնքված ռուս-թուրքական պայմանագրից հետո «օրինականացրել» էր նաև Սյունիքի և Արցախի նվաճումը: Մակայն մելիքական ուժերի պայքարն այնքան աննախադեպ է եղել, որ մերձկասպյան ռուսական զորքերի հրամանատար, գեներալ Վ. Դոլգորուկովը 1727 թ. մայիսի 11-ին կառավարությանը հղած իր զեկուցագրում զարմանքով նշում է. «Մարդկային բանականությունից վեր է հասկանալ, որ նրանք այդքան հզոր թշնամու դեմ դեռ կարողանում են պաշտպանվել» (էջ 46): Արցախի մելիքների զորաջոկատները ակտիվորեն մասնակցել են նաև 1804–1813 թթ. ռուս-պարսկական պատերազմին և շոշափելի ներդրում ունեցել ռուսական զենքի հաղթանակներում:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում աշխատության «Դատավարությունը Արցախի մելիքություններում», «Հարկային պարտավորություններ», «Արցախի մելիքների մասնակցությունը իրենց գավառի հոգևոր գործերին» ենթագլուխները: Հիմնվելով փաստալից նյութի վրա՝ Ա. Մաղալյանը տալիս է Արցախի մելիքություններում դատական գործի վիճակը, դատարանների և դատավարության գործունեությանը ևս մեկ անգամ փաստարկում Արցախի մելիքների ինքնիշխան իրավիճակի առկայությունը: Հատկանշական է, որ զուգահեռներ են անցկացվում Արցախի

և Արարատյան աշխարհի մելիքների իրականացրած դատական գործառնությունների վերաբերյալ, ընդամին ընդգծելով, որ սույն առումով ևս Արցախի մելիքների անկախ ու ինքնիշխան կացությունը առավել քան տեսանելի էր: Բազմառատ ու բազմաբնույթ փաստերի վկայակոչումը ակներև է դարձնում այն իրողությունը, որ մարտերում կոփված հզոր և ազդեցիկ մելիքները կարողացել են իրենց հեղինակությամբ լիակատար կարգ ու կանոն հաստատել սեփական գավառներում:

Աշխատության երկրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է Արցախի մելիքական տների տոհմաճառերի պատմաբանասիրական քննությանը: Մանրակրկիտ ու հետևողական ուսումնասիրության աղբյուրն է Ա. Մաղալյանի կողմից կազմվել ու ամբողջական տեսքի են բերվել Գյուլիստան գավառի տիրակալ Մելիք-Բեգլարյանների, Ջրաբերդի գավառի տիրակալ Մելիք-Իսրայելյանների, նույն գավառի վերջին տիրակալ Աթաբեկյանների, Խաչեն գավառի տիրակալ Հասան-Ջալալյանների, Վարանդա գավառի տիրակալ Մելիք-Շահնազարյանների և Դիզակ գավառի տիրակալ Մելիք-Եգանյանների տոհմաճառերը՝ անհրաժեշտ մեկնաբանություններով ու պարզաբանումներով: Սույն գլուխը կարևորվում է նաև նրանով, որ մելիքական, իշխանական տների դարավոր արմատների ճշգրտումով ու հավաստումով, վերստին վավերագրվում է հայոց իշխանական համակարգի շարունակականությունը Հայկական լեռնաշխարհում վաղնջական ժամանակներից սկսած: Տոհմաճառերի պատմությունը շարադրելիս հեղինակն անդրադառնում է Արցախի ճակատագրում եղերորեն բացասական դեր կատարած Մելիք-Շահնազար Բ-ի կերպարին ու գործունեությանը՝ նոր փաստերով ու մոտեցումով ևս մեկ անգամ անարգանքի սյունին գամելով ազգադավ իշխանին: Հետազոտողը արդարացիորեն քննադատում և դատապարտում է դավաճանի երեկվա ու այսօրվա պաշտպաններին, քանզի Մելիք-Շահնազարի ազգադավ գործունեությունը չափազանց ծանր հետևանքներ ունեցավ Արցախի հայկական իշխանություն-

ների համար: Ուսանելի, ճշմարիտ ու արդիական է հեղինակի այն դիտարկումը, որ միայն Արցախյան հերոսական ազատամարտի շնորհիվ հաջողվեց սրբագրել Մելիք-Շահնագարի թույլ տված ճակատագրական 240-ամյա սխալը:

Աշխատությանը կցված են ծավալուն երկու հավելված, որոնք հույժ կարևոր նշանակություն ունեն: Դրանք հեղինակի կողմից արխիվներում հայտնաբերված վավերագրերն են, որոնք ունեն ներածական և անհրաժեշտ ծանոթագրություններ: Ընդհանուր թվով դրանք հիստուն վավերագրեր են, որոնք բերված են բնագրային լեզվով ու տեսքով (հայերեն և ռուսերեն):

Ամփոփելով ասվածը՝ պիտի արձանագրենք, որ պատմաբան Ա. Մաղայանը տարիների տքնանքով, գիտական բարեխիղճ բժախնդրությամբ ու պարտաճանաչությամբ կարողացել է ստեղծել գիտական բարձրարժեք մի գործ, որ առ այսօր կարող է հավակնել լավագույնը հանդիսանալու XVII–XIX դարերի Արցախի մելիքությունների և մելիքական տների պատմության ու սուսնասիրության գործում:

Առանձնահատուկ պետք է փաստարկել, որ սույն աշխատությունը կարևոր նշանակություն ունի հայոց պատմության վերոնշյալ ժամանակաշրջանի դասերը հաշվի առնելու, անհրաժեշտ եզրահանգումներ կատարելու համար, քանի որ պատմական իրադրությունները հաճախ

կրկնվում են: Եվ վերստին կորուստներ են տալիս այն ազգերը, որոնք չեն խրատվում անցյալի դասերից և պատմության դժվարին քառուղիներով անցնելիս նորից թույլ են տալիս ճակատագրական սխալներ ու վրիպումներ: Այս առումով տեղին է հիշեցնել վերջաբանում Ա. Մաղայանի կատարած այն չափազանց ուշագրավ ու բնութագրական դիտարկումը, որ «Արցախի մելիքությունների պատմությունը նաև միաբան լինելու մի յուրօրինակ դաս է գալիք սերունդներին: Այդ դասը հաշվի չառնելու դեպքում մեր հայրենիքի այլևայլ անկյուններում ևս կարող են հայտնվել նորօրյա փանահներ և իբրահիմներ» (էջ 214): Ավելին, հեղինակը սրան ավելացնում է այն թեզը, որ եթե այսօր ունենք ազատ և անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ապա այդ պետության կայացման ենթախորքում, անտարակույս, իրենց անուրանալի դերն ունեն նաև Արցախի հերոսական, հայրենապաշտպան մելիքներն ու մելիքությունները, որոնց հետևողական ու խիզախ ջանքերի շնորհիվ պահպանվեց այս երկրամասի հայեցի նկարագիրը:

Վերջում նշենք, որ գրքի բովանդակությունը շահեկանորեն հարստացնում են առանձնատիպ ներդիրները, որոնք հավելյալ կերպով ապացուցում են հեղինակի լրջմիտ, պարտաճանաչ ու հետևողականորեն պատասխանատու վերաբերմունքը ստանձնած գործի հանդեպ:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ